

Փորձագիտական աշխատանք

Օրհուսի կոնվենցիայի դրույթների կիրառումը
տեղական մակարդակում

Դիլիջան համայնքի բնապահպանական հարցեր և
դրանց լուծմանը ուղղված գործողությունների
ներգրավումը Դիլիջան համայնքի զարգացման
ծրագրում

Իրականացնող՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի փորձագետ, Դիլիջանի Օրհուս
կենտրոնի համակարգող Ալբերտ Հարոյան

Փորձագիտական աշխատանքը իրականացվել է ԵԱՀԿ երևանյան
գրասենյակի աջակցությամբ

Աշխատանքի իրականացման ժամկետը

Մեպտեմբեր – Դեկտեմբեր 2016

Դիլիջան

Բովանդակություն

Նախաբան.....էջ 3

Դիլիջան համայնքի նկարագիր.....էջ 4

ՏԻՄ իրավական կարգավորումները.....էջ 5

Օրհուս կոնվենցիայի գործածությունը
տեղական մակարդակում..... էջ 6

Համայնքի զարգացման ծրագրի
կազմման կարգավորումները.....էջ 7

Համայնքում զարգացման ծրագրի կազմման գործընթացներում
համայնքի բնակիչների մասնակցության կարգավորումները.....էջ 9

Դիլիջան համայնքի 2016-2020թթ. քառամյա զարգացման ծրագրի
բնութագիրը էջ 11

Դիլիջան համայնքի զարգացման ռազմավարությունը..... էջ 12

Դիլիջան համայնքի ԲԶԾ-ում բնության և շրջակա միջավայրի
պահպանության բաղադրիչը..... էջ 14

Համայնքի բնակչության տեղեկացված լինելը էկոլոգիական
անվտանգության իրավիճակի վերաբերյալ էջ 15

Դիլիջան համայնքի ներկայիս էկոլոգիական իրավիճակը էջ 16

Բնակչության կողմից թվարկված էկոլոգիական իրավիճակի
ամենասուր խնդիրները էջ 17

Բնակչության ազդեցությունը որոշումների կայացման վրա էջ 18

Առաջարկություններ ԲԶԾ-ի, ներկայացված
Դիլիջան համայնքի ղեկավարին էջ 19

1. Նախաբան

Սույն փորձագիտական աշխատանքով անդրադարձվում է՝ համաձայն փորձագետի և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի միջև կնքված պայմանագրի նպատակների իրականացմանը: Այն է, իրականացրել է Օրհուսի կոնվենցիայի դրույթների կիրառումը տեղական մակարդակում, Դիլիջան համայնքի բնապահպանական հարցեր և դրանց լուծմանը ուղղված գործողությունների ներգրավումը Դիլիջան համայնքի զարգացման ծրագրում¹՝ բարձրացնելով տեղական կարողությունները բնապահպանական կառավարման հարցերի վերաբերյալ փորձագիտական աշխատանքը: Փորձագիտական աշխատանքի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել Դիլիջանի համայնքապետարանին՝ ՀՀ օրենսդրության և Օրհուսի կոնվենցիային համապատասխան հանրության ներգրավումը ապահովելու որոշումներ կայացնելու գործընթացներում: Մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի քննարկման և հասարակական լուծումներին անցկացման գործընթացներում: Ուսումնասիրվել է հանրության մասնակցությունը երաշխավորող օրենսդրական կարգավորումները, որն էլ իր արտացոլումն է գտել զեկույցում: Նպատակ ունենալով ի ցույց դնել հանրության մասնակցության իրավական կարգավորումները տեղական մակարդակում: Ուսումնասիրվել է նաև համայնքի 2016-2020թթ. քառամյա զարգացման ծրագիրը, մասնավորապես բնապահպանական բաղադրիչը՝ ծրագրի ռազմավարությունը, առաքելությունը ու նպատակները, որը նույնպես ներկայացված է սույն աշխատությունում: Փորձագիտական աշխատանքի ողջ ընթացքում կազմակերպվել են տարբեր հանդիպում քննարկումներ համայնքի շահագրգիռ կողմերի հետ, նպատակ ունենալով ներկայացնել տեղեկատվություն փորձագետի կողմից կատարված աշխատանքների մասին, ինչպես նաև լսել կարծիքներ և առաջարկություններ վերջիններիս կողմից: Նմանատիպ հանդիպումներ են անցկացվել նաև համայնքի ղեկավարության հետ: Հանդիպումների ընթացքում բարձրաձայնված հարցադրումների հիման վրա կազմվել է հարցաթերթ, որի նպատակն է հանդիսացել ավելի մեծ թվով բնակիչների կարծիքներին և տեսակետներին ծանոթանալը: Տեղեկանալ բնակչության առաջարկություններին թե ինչպիսիսն է իրենց պատկերացմամբ անվտանգ համայնքը, որոնք են այն հիմնական խնդիրները շրջակա միջավայրի պահպանության ոլորտում և ըստ իրենց առաջարկությունների ինչպես են տեսնում այդ խնդիրների լուծումները:

Հարցմանը մասնակցել են տարբեր սեռատարիքային և զբաղվածություն ունեցող 250 համայնքի բնակիչներ: Այս գործընթացի հիմնական նպատակներից է եղել մի կողմից աջակցելով հանրության մասնակցությունը որոշումներ կայացման գործընթացում, մյուս կողմից հանրության կարծիքը լսելի դարձնել տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան ներկայացուցիչներին՝ առաջարկությունների փաթեթի տեսքով: Աշխատանքային զեկույցում ներկայացվում է նաև հարցման պատասխանների վերլուծականը:

Փորձագիտական աշխատանքի արդյունք դիտարկվում է համայնքի զարգացման ծրագրի առաջարկությունների փաթեթի կազմելը և Դիլիջան համայնքի ղեկավարին ներկայացնելը:

¹ Ըստ ՏԻՄ օրենքի 2016թ. փոփոխությունների համաձայն համայնքների քառամյա զարգացման ծրագրերը վերածվել են համայնքի հնգամյա զարգացման ծրագրերի

2. Դիլիջան համայնքի նկարագիր

<<ՀՀ վարչատարածքային բաժանման մասին>> ՀՀ օրենքում² լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի՝ ընդունված 24.11.2015թ. և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի³ 84-րդ հոդվածի 14-րդ մասի հիման վրա Տավուշի մարզի Դիլիջան քաղաքը, Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Աղավնավանք, Հովք, Խաչարձան գյուղերը վերակազմակերպվել են որպես մեկ համայնք՝ <<Դիլիջան համայնք>> անվանմամբ:

Դիլիջան խոշորացած համայնքը ընդգրկում է հետևյալ բնակավայրերը՝ Դիլիջան քաղաք, Հաղարծին գյուղ, Թեղուտ գյուղ, Գոշ գյուղ, Հովք գյուղ, Աղավնավանք գյուղ, Խաչարձան գյուղ: Դիլիջան համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում: Համայնքը հյուսիսից եւ արևելքից 7277մ հատվածով սահմանակից է Ծաղկավան համայնքին, արևելքից 6806մ հատվածով՝ Սեւքար համայնքին, 7843մ հատվածով՝ Ենոքավան, 454մ հատվածով՝ Գետահովիտ, 24569մ հատվածով՝ Գանձաքար, 2107 հատվածով՝ Իծաքար, արևելքից 5610մ հատվածով՝ Նավուր համայնքներին, հարավից Գեղարքունիքի մարզին, հարավ-արևմուտքից՝ Կոտայքի մարզին, արևմուտքից՝ Լոռու մարզին: Դիլիջան քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան մասում Աղստեն գետի հովտում, ծովի մակերևույթից 1100-1510 մետր բարձրության վրա, շրջապատված Փոքր Կովկասի լեռնազանգվածներով: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը 4301.5 հա, անտառային հողերը /ազգային պարկ/ 1786.4հա: Տարածքի հիմնական ջրային զարկերակը Աղստեն գետն է՝ իր վտակներով: Համայնքը շրջապատված է "Դիլիջան" ազգային պարկով⁴: Համայնքի բնակչության թիվը կազմում է 27473 մարդ, որոնցից տղամարդիկ կազմում են 49,3 տոկոսը:

² <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5370&lang=arm>

³ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=106954>

⁴ <http://dilijanpark.am>

3. ՏԻՄ իրավական կարգավորումները

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումից հետո (1995 թվականի հուլիսի 5) Հայաստանի հանրային կառավարման համակարգում պետական կառավարմանը զուգահեռ ստեղծվեց տեղական ինքնակառավարման համակարգը: ՀՀ տեղական ինքնակառավարման իրականացումը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, որի 7-րդ գլխի 104-110 հոդվածներն⁵ ուղղակիորեն սահմանում են տեղական ինքնակառավարման հարցերը, "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքով⁶, որը հիմնվում է Տեղական Ինքնակառավարման մասին Եվրոպական Խարտիայի⁷ վրա, այլ օրենքներով եւ իրավական ակտերով: Հայաստանը Տեղական Ինքնակառավարման մասին Եվրոպական Խարտիան վավերացրել է 2002 թվականին: Տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ և օրենքի շրջանակներում ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինների համայնքային խնդիրները լուծելու և համայնքի սեփականությունը տնօրինելու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքը և համայնքի կարողությունն է:

⁵ <http://www.parliament.am/parliament.php?id=constitution>

⁶ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=106954>

⁷ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=20822>

4. Օրհուս կոնվենցիայի գործածությունը տեղական մակարդակում

Հայաստանի Հանրապետությունը միանալով <<Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին>> (Հայաստանը վավերացրել է Օրհուսի 2001թ, որից հետո այն դարձել է պարտադիր իրավական ակտ) կոնվենցիային⁸ ձեռնամուխ է եղել կոնվենցիա բաղադրիչների իրականացմանը: Այս գործընթացում աջակցություն ստանալով ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից՝ վերջինիս մասնակցությամբ էլ ըստ եռակողմ փոխըմբռնման հուշագրի Դիլիջան համայնքում 2005թ. ստեղծվել է Օրհուս կենտրոն⁹: ՕԿ-ը 2006թ-ից սկսելով իր աշխատանքները ձեռնամուխ է եղել համայնքում կոնվենցիայի դրույթների իրականացման աջակցությանը տեղական մակարդակում՝ մասնավորապես որպեսզի հանրությունը կարողանա օգտվի իր իմանալու իրավունքից, մասնակցելու իրավունքից և արդարադատության մատչելիության իրավունքից: Այս գործընթացների շրջանակներում Օրհուս կենտրոնը համագործակցելով Դիլիջանի համայնքապետարանի հետ աջակցել է կազմակերպել ` սկսած 2006թ-ից համայնքի կարևորագույն փաստաթղթերի տարբեր տարիների բյուջենների, քառամյա զարգացման պլանների, համայնքի գլխավոր հատակագծի նախագծերի հանրային քննարկումներ¹⁰:

⁸ http://aarhus.am/?page_id=384

⁹ http://aarhus.am/?page_id=55

¹⁰ http://aarhus.am/?page_id=251

5. Համայնքի զարգացման ծրագրի կազմման կարգավորումները

Համայնքի գործունեության արդյունավետությունը հիմնականում կախված է լավ կառավարումից: Իսկ լավ կառավարման համար անհրաժեշտ է ճիշտ և արդյունավետ պլանավորում՝ համայնքի նպատակների և գործունեության ցուցանիշների, ինչպես նաև՝ խնդիրների առաջադրման և կատարման համար պահանջվող ռեսուրսների գնահատում:

Քառամյա զարգացման ծրագրի մշակման և կառավարման դրույթներ սահմանում է <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքը¹¹: Ըստ օրենքի համայնքի ղեկավարը մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում քառամյա ծրագիրը՝ բովանդակային մասով օրենքը նույնպես պարունակում է մի քանի դրույթներ.

- ծրագիրը պետք է ներառի համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ և համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ (հոդված 53), համայնքի սեփականություն համարվող շենքերի, շինությունների (հոդված 37 կետ 7.1) ու հողամասերի (հոդված 38 կետ 1.1) օտարման քառամյա ծրագրերը՝ տարեկան կտրվածքով:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքից¹²

Հոդված 53. Համայնքի քառամյա զարգացման ծրագիր

Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Համայնքի նորընտիր ղեկավարը մշակում է համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, և իր լիազորությունները ստանձնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում ներկայացնում ավագանու հաստատմանը: Համայնքի ավագանին քննարկում է ներկայացված ծրագիրը, անհրաժեշտության դեպքում՝ դրա մեջ կատարում փոփոխություններ և (կամ) լրացումներ և ընդունում է այն՝ նիստին ներկա ավագանու անդամների ձայների

¹¹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=106954>

¹² <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=106954>

մեծամասնությամբ: Համայնքի քառամյա զարգացման ծրագրի գործողության ժամկետի ընթացքում համայնքի ավագանու անդամների ընտրություն կայանալու դեպքում՝ ավագանու լիազորությունները ստանձնելուց հետո եռամյա ժամկետում համայնքի ավագանու անդամների օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող են առաջարկվել քառամյա զարգացման ծրագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ: Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը պետք է համահունչ լինի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության հավանությանն արժանացած մարզային, տարածաշրջանային զարգացման և այլ ռազմավարական ծրագրերին:

Համայնքի քառամյա զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվում են.

- 1) համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ.
- 2) շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ.
- 3) համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ.
- 4) աղետների ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ.
- 5) համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ:

6. Համայնքում զարգացման ծրագրի կազմման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցության կարգավորումներ

Հասարակության մասնակցությունը գործընթաց է, որի շնորհիվ խնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունելիս հաշվի են առնվում առանձին մարդկանց կամ մարդկանց խմբերի կարծիքները և դիրքորոշումները: Մասնակցային գործընթացի հիմնական սկզբունքները իր մեջ ներառում է՝ հասարակության ներգրավվումը նախագծի քննարկման բոլոր փուլերում. մշակումից մինչև իրականացում, հատկապես նախնական փուլում, երբ առկա է որոշումների վրա ազդելու հնարավորությունը: Ինչպես նաև մասնակցության համար սահմանվում են ողջամիտ ժամկետներ՝ հասարակությանը տրամադրելով տեղեկատվություն մասնակցության հնարավորությունների մասին: Հասարակության մասնակցությունը (Օրհուսի կոնվենցիա 6,7,8 հոդ.)¹³ հիմնականում կայանում է շահագրգիռ հասարակությանը կոնկրետ տեսակի գործունեության համար որոշում կայացնելու գործընթացին ընդգրկելը: Մասնակցության հիմնական ձևերն են՝ հասարակական լսումներ և քննարկումներ, հասարակության դիտողությունների և կարծիքների հաշվառում՝ հաշվի առնելով որոշումներ կայացնելու գործընթացում:

Համայնքի գործունեության հիմնական փաստաթղթերը՝ զարգացման ծրագիր և բյուջեն է: Այս կարևորագույն փաստաթղթերի կազմման գործընթացում հանրության մասնակցությունը կարգավորվում է <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքով¹⁴:

Հոդված 54.1. Համայնքի զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունը.

Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ): Համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և (կամ)

¹³ http://aarhus.am/?page_id=384

¹⁴ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=106954>

քննարկումներ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի¹⁵ 27.1-ին հոդվածով սահմանված ժամկետում: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն: Դիլիջան համայնքի ավագանին՝ 22/03/2016 թվականի ավագանու արտահերթ նիստում N 40 որոշմամբ¹⁶, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30-րդ հոդվածի¹⁷, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10.1-ին հոդվածի, 16-րդ հոդվածի 33-րդ կետի, 20-րդ հոդվածի 3.2-րդ կետի, 30-րդ հոդվածի 6.1-ին կետի, 33.1-ին հոդվածի 1-4-րդ կետերի¹⁸, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-14-րդ հոդվածների¹⁹, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24.1 հոդվածի 4-րդ մասի²⁰, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի²¹ 26-րդ հոդվածի և հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան²², «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք²³, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք²⁴, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N° 1325-Ն որոշումը²⁵.

հաստատել է «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»²⁶:

Իսկ N 39 որոշմամբ «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»²⁷:

¹⁵ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1280>

¹⁶ <http://dilijancity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=57f07ad2-16df-4e42-9fef-ab9d2e349a73>

¹⁷ <http://www.parliament.am/parliament.php?id=constitution>

¹⁸ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=106954>

¹⁹ <http://www.arlis.am/documentview.aspx?docID=69797>

²⁰ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90941>

²¹ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5037>

²² <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=20822>

²³ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=75497>

²⁴ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1372>

²⁵ <http://www.arlis.am/documentview.aspx?docID=94183>

²⁶ <http://dilijancity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=57f07ad2-16df-4e42-9fef-ab9d2e349a73>

²⁷ <http://dilijancity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=50cd631d-29cb-40bf-a6e4-4288cddf9525>

7. Դիլիջան համայնքի 2016-2020թթ. քառամյա զարգացման ծրագրի բնութագիրը

2016թ.-ի հուլիսի 13-ին Դիլիջան համայնքի ավագանին N 78 որոշմամբ²⁸ համաձայն. <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, հաստատել է Դիլիջան համայնքի զարգացման քառամյա ծրագիրը²⁹: Ինչպես նաև սահմանելով, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի, պետական բյուջեից ֆինանսավորման, ինչպես նաև դոնոր կազմակերպություններից սպասվելիք ֆինանսավորման սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

Ըստ համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձի, քառամյա զարգացման ծրագիրը մշակվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից, բնակիչների, ավագանու անդամների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ

²⁸ <http://dilijancity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=6c455390-758c-49cc-83a0-e1bd8112c21b>

²⁹ <http://dilijancity.am/Pages/DocFlow/Doc.aspx?nt=1&dt=Projects>

համատեղ: Այն սահմանվում է համայնքի ֆինանսական կառավարման հիմնական քաղաքականությունը գալիք 4 տարիների համար: Որը կդառնա ուղեցույց համայնքային ծառայությունների մակարդակի և որակի պահպանման, խթանման և բարձրացման համար: Համայնքի զարգացման քառամյա ծրագրում անդրադարձ է կատարվում նաև Դիլիջանի Օրհուս կենտրոնին (ՔԶԾ էջ 19)³⁰, որում մասնավորապես ասված է.

«Դիլիջանում ստեղծվել է նաև Օրհուս հասարակական բնապահպանական տեղեկատվության կենտրոն, որն աջակցում է հասարակության համար բնապահպանական տեղեկատվության առավել մատչելի դարձնելուն և այդ ոլորտում խթանում է որոշումների կայացմանը հասարակության մասնակցության արդարադատության մատչելիությանը: Կենտրոնը նաև նպաստում է բնապահպանական հարցերում հասարակության համար թափանցիկ միջավայրի ստեղծմանը»:

8. Դիլիջան համայնքի զարգացման ռազմավարությունը

Ըստ ՔԶԾ-ի համայնքի 2016-2020թթ առաքելությունը կայանում է որակյալ ծառայությունների մատուցում համայնքի բնակչության և զբոսաշրջիկներին, ապահովելով համայնքի բնականոն զարգացումը: Դիլիջան համայնքը դարձնել բարեկեցիկ և մրցունակ ներդրումների համար:

Համայնքի ռազմավարական նպատակ դիտարկվում է բնակչության սոցիալ-տնտեսական բարեփոխումների անցկացման ճանապարհով համայնքի կայուն զարգացում ապահովումը՝ դարձնելով այն տարածաշրջանային ֆինանսական, կրթական և զբոսաշրջության կենտրոն:

Համայնքի ՔԶԾ-ում ամրագրվել է ութ հիմնական նպատակներ.

1. Դիլիջան համայնքի տարածքային համաչափ, կայուն զարգացումը և պլանավորումը
2. Բնակչության կենսական շահերի ապահովումը
3. Քաղաքային տնտեսության բոլոր ոլորտների՝ ժամանակի պահանջներին համահունչ զարգացման ապահովումը
4. Բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովումը՝ ինչպես Դիլիջանի բնակիչների, այնպես էլ զբոսաշրջիկների համար
5. Հանգստի գոտիների ստեղծումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը, շենքերի և բակային տարածքների բարեկարգումը, ժամանակակից չափանիշներին համապատասխան արտաքին ձևավորումը, հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովումը
6. Բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցումը և որակի էական բարելավումը էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործումը
7. Մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության, իսկ մշակույթի տան ամբողջական հիմնանորոգման աշխատանքների ավարտի ապահովումը

³⁰ <http://dilijancity.am/Pages/DocFlow/Doc.aspx?nt=1&dt=Projects>


8. Առողջ ապրելակերպի խրախուսումը՝ այդ նպատակով նպաստավոր պայմանների ստեղծում գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը միջազգային համագործակցության ընդլայնումը, քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացումը:

9. Դիլիջան համայնքի ՔԶԾ-ում բնության և շրջակա միջավայրի պահպանության բաղադրիչը

Համաձայն Դիլիջան համայնքի ՔԶԾ³¹ –ում (1.8 ենթակետ, էջ.10) արտացոլված տեղեկատվության համայնքի օդի աղտոտվածությունը չի գերազանցում նորմատիվային մակարդակը: Աղստն գետն աղտոտվում է արտադրական և կենցաղային հոսքաջրերով, որոնք գետ են թափվում առանց մաքրման կոյուղու ցանցով և անկազմակերպ ջրնետքերով: Հոսքաջրերի մաքրման կայանը ներկայումս չի աշխատում: Շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն են գործում համայնքի թափոնները, որոնք պահեստավորվում են Հաղարծին գյուղի մոտ գտնվող աղբավայրում: Թափոնների տարեկան ծավալը կազմում է 5.4 հազ. խոր.մ: Հովք, Խաչարձան, Աղավնավանք, Հաղարծին, Գոշ գյուղերում աղբահանությունը կատարվում է անհատական ձևով՝ միայն կենտրոնական հատվածում: Դիլիջան համայնքի կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 1947 հա: Չնայած համայնքի կանաչապատման ընդհանուր բարձր աստիճանի, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներով /զբոսայգիներ, պուրակներ/ բնակչության ապահովվածությունը ցածր է: Հատուկ նշանակության կանաչ տարածքների զգալի մասը կարիք ունեն մեծածավալ վերականգնողական միջոցառումների: Մեկ բնակչին ընկնող կանաչ տարածքը ըստ ՔԶԾ հիմնական ցուցանիշի 3.9 Ք/Մ: Համայնքի զարգացման որպես թույլ կողմ դիտարկվում է սողանքների առկայությունը և սեյսմիկ վտանգը: Որպես բարենպաստ փոփոխություններ հնարավորություններ ՔԶԾ-ում ամրագրվել է աղբի վերամշակման ծրագրի և էներգոարդյունավետ տեխնոլոգիաների կիրառման ենթակետերը: Իսկ համայնքին որպես վտանգ սպառնացող փոփոխություններ մատնանշվել են՝ աղբի վերամշակման բացակայություն, կանաչապատումը և աղբահանության խնդրի առաջացման ենթակետերը:


³¹ <http://dilijancity.am/Pages/DocFlow/Doc.aspx?nt=1&dt=Projects>

10. Համայնքի բնակչության տեղեկացված լինելը էկոլոգիական անվտանգության իրավիճակի վերաբերյալ:




Հիմնական տեղեկատվության աղբյուր հարցման մասնակիցները նշել են Դիլիջանի Օրհուս կենտրոնը իր տեղեկատվության տարածման կոմունիկացիաներով և սոց. ցանցերը՝ մասնավորապես Facebook:

11. Համայնքի ներկայիս էկոլոգիական իրավիճակը:




12. Բնակչության կողմից թվարկված էկոլոգիական իրավիճակի ամենասուր խնդիրները ³²



³² Խնդիրները չեն դասակարգվել ըստ առաջնահերթության, քանի որ ամեն մի հարցման պատասխանող իր կողմից նշված խնդիրն է համարում առաջնային: Եվ բնակչի կողմից նշված բոլոր կարծիքներ մեր համար ընդունելի են

13. Բնակչության ազդեցությունը որոշումների կայացման վրա՝ շրջակա միջավայրի պահպանության հարցերի շուրջ



<<Ոչ, չեմ կարող>> պատասխանի ուսումնասիրությունը հանգեցրեց այն եզրակացության, որ բնակիչը բացասական է պատասխանել ոչ թե այն հանգամանքից, որ տեղյակ չէ կամ մասամբ է տեղեկացված իր մասնակցային իրավունքներից, այլ որ թերահավատորեն է մոտենում այդ գործընթացներին: Նկատվում է վստահության գործոնի բացակայությունը:

14 Առաջարկություններ

(Կազմվել է շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, ստացված առաջարկությունների վերլուծության հիման վար՝ ներկայացված է Դիլիջան համայնքի ղեկավարին)

Համայնքի զարգացման ծրագրի³³ (գլուխ-2 էջ 21) ռազմավարության և հիմնական նպատակներ բաժնում առաջարկվում է.

1. Համայնքի առաքելությունը պարբերությունում ավելացնել.

ապահովելով առողջ և անվտանգ շրջակա միջավայրի պահպանություն և ախտադասությունը, որպես համայնքի առաքելության բաղադրիչ:

Հիմնավորում.

- առանց առողջ և անվտանգ շրջակա միջավայրի պաշտպանության ապահովման անհնար է իրականացնել համայնքի առաքելության մյուս կոմպոնենտները՝ *որակյալ ծառայություններ մատուցել համայնքի բնակչությանը և զբոսաշրջիկներին, ապահովել համայնքի բնականոն զարգացումը, Դիլիջանը դարձնել բարեկեցիկ և մրցունակ ներդրումների համար:*

Ֆինանսավորումը և աջակցումը

Տվյալ գաղափարի ներդրումը սկզբնական շրջանում չի պահանջում ֆինանսական ներդրում, այլ ուղակի հարկավոր է քաղաքական կամք և հետևողականություն: Իսկ աջակցում հնարավոր է առաջին հերթին համայնքի բնակչությունից և առհասարակ բոլոր այն անհատներից և կազմակերպություններից, որոնք շահագրգռված են Դիլիջան համայնքը տեսնելու առողջ և անվտանգ շրջակա միջավայրի պահպանմամբ:

³³ <http://dilijancity.am/Pages/DocFlow/Doc.aspx?nt=1&dt=Projects>

2. Համայնքի ռազմավարական նպատակում առաջարկվում է ավելացնել.

Համայնքում ներդնելով կանաչ տնտեսության սկզբունքները

Նախադասություն-գաղափարը

Հիմնավորումը՝ Կլիմայական փոփոխությունները, շրջակա միջավայրի ճգնաժամը, վերացող պաշարները, շրջակայքի աղտոտվածություն մարդու գործունեության արդյունքում առաջացած խնդիրներ են, որոնք վնասակար ազդեցություն ունեն տնտեսական գործունեության վրա և առհասարակ համայնքի զարգացմանը: Գտնում ենք, որ առանց կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման գաղափարախոսության անհնար կլինի, որպեսզի համայնքը իրականացնի իր գլխավոր ռազմավարական նպատակը՝ **բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով ապահովել քաղաքի կայուն զարգացումը, այն դարձնել տարածաշրջանային ֆինանսական, կրթական և զբոսաշրջության կենտրոն:**

Կանաչ տնտեսության սկզբունքների ներդրումը, որպես համայնքի ռազմավարական նպատակ հնարավորություն կստեղծի պոտենցիալ նորարարական լուծումների ներդրմանը համայնքում, որոնք հող կնախապատրաստեն «անվնաս» տնտեսական զարգացման համար: Համայնքը կդառնա ավելի հրապուրիչ նման գաղափարախոսություն տարածող համայնքների, կառույցների, կազմակերպությունների, բիզնես ոլորտի ներկայացուցիչներին կատարելու ներդրումներ ապահովելով կայուն զարգացում: Որդեգրելով կանաչ տնտեսության սկզբունքների ներդրումը, որպես ռազմավարական նպատակների բաղադրիչի մաս և իհարկե այդ սկզբունքների իրականացումը հնարավորություն կտա համայնքի խնայել ռեսուրսները, ուղղելով այն այլ ոլորտների զարգացմանը: Այն էականորեն կփոխի համայնքի բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության մոտեցումները, դարձնելով վերջիններիս ավելի պատասխանատու և սրտացավ հանուն համայնքի էկոլոգիապես անվտանգության և կայուն զարգացման:

Ֆինանսավորումը և աջակցումը՝ կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման

ՀՀ կառավարություն, Հիմնադրամներ, Տեղական. Տարածաշրջանային, միջազգային կազմակերպություններ, նորարական բիզնես սեկտոր:

3. Համայնքի քառամյա զարգացման ծրագրի հիմնական նպատակներ ենթակետում ավելացնել ևս մեկ նպատակ

Կազմել Դիլիջան համայնքի շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների պլան – որպես քառամյա զարգացման ծրագրի նպատակներից մեկը և որպես ծրագրային գործառույթ:

Հիմնավորում՝ Շրջակա միջավայրի պահպանման գործողությունների պլանի կազմումը, որպես նպատակ ամրագրելը և իրականացնելը հնարավորություն կտա համայնքին՝ ավելի մասնագիտական ուսումնասիրություն կատարել և ըստ առաջնահերթությունների դասակարգել ոլորտին առնչվող խնդիրները, կենտրոնացնել համայնքի խնդիրների լուծումների տեսլականը և ռեսուրսները մեկ փաստաթղթում, որի իրականացման համար ավելի դյուրին և նպատակային կլինի գտնել համագործակցող կառույցներ, կազմակերպություններ և անհատներ՝ ներգրավելով բիզնես սեկտորին: Ըստ առաջարկվող գործողությունների պլանում ամրագրված կլինեն ամեն մի խնդրի առաջացման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները՝ հստակ կնշվեն դրանց լուծման ուղիները, միջոցները ու ժամանակահատվածը: Փաստաթղթի կազմմանը գործընթացում ներգրավելով հանրության ներկայացուցիչների մասնակցությունը, որն էլ կնպաստի տեղական մակարդակում Օրհուսի կոնվենցիայի մասնակցային բաղադրիչի իրականացմանը: Տվյալ պլանում կարող են նաև ընդգրկվել քառամյա զարգացման ծրագրի այն նպատակային կետերը ու գաղափարները, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանությանը:

Ֆինանսավորումը և աջակցումը՝ տեղական և հանրապետական բյուջե, միջազգային և տարածաշրջանային կառույցներ ու կազմակերպություններ, համայնքներին տրվող սուբվենցիաներ, շահագրգիռ բիզնես սեկտոր:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս
(+374 268) 2-33-62

N 1055-16
21 դեկտեմբեր 2016թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ԱԼԲԵՐՏ ՀԱՐՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարոյան

Ի պատասխան Ձեր 05.12.2016թ. գրության հայտնում եմ, որ Դիլիջան համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառել ենք Ձեր առաջարկությունները և առաջիկա ավագանու նիստին կներկայացվի քննարկման:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Կար. ՀՀ Դիլիջանի համայնքապետարանի աշխարակազմի ֆինանսական բաժնի պետ՝ Գոհար Դավթյան
(+374 268) 2-25-85